ՀՏԴ 94/479.25/
Պատմություն

*Արմինե ԽԱՉԱՏՐՅԱՆ*
*ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.*

# ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԶԱՎԹՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽՈՒՄ: ԱՆԴՐԱԴԱՐՁ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻՆ

*1920թ. Ադրբեջանի խորհրդայնացումից հետո արցախյան հիմնախնդիրը թևակոխեց նոր փուլ: Ադրբեջանի զավթողական քաղաքականությունը ըստ էության չփոխվեց: Ադրբեջանական պատմագիտության ներկայացուցիչները ամեն կերպ խեղաթյուրելով հայտնի պատմական փաստերը, «արդարացնում են» իրենց երկրի ագրեսիվ կեցվածքը անհիմն փաստարկներով: Մասնավորապես, Խորհրդային Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ բացատրում են այն կեղծ թեզով, թե իբր Ղարաբաղը 1918-1920թթ., ամբողջությամբ մտնում էր Ադրբեջանի կազմ: Սույն հոդվածում մի շարք փաստերով բացահայտվում են ադրբեջանցի հեղինակների կեղծ փաստարկները: Հայաստանի հանրապետության պատմական տարածքների կորուստը տեղի ունեցավ քեմալաբոլշևիկյան և Խորհրդային Ադրբեջանի քաղաքական շահերի մեկտեղման արդյունքում, այլ ոչ թե պատմական արդարության հիմքով, ինչպես փորձում են «ապացուցել» ադրբեջանցի պատմաբանները:*

***Բանալի բառեր՝*** *Խորհրդային Ադրբեջան, Հայաստանի Հանրապետություն, հանրագումար, զավթողական քաղաքականություն, ինքնորոշում, ադրբեջանցի պատմաբան, խեղաթյուրում, վիճելի տարածքներ, հավակնություններ:*

***А.Хачатрян***

***АРЦАХСКАЯ ПРОБЛЕМА НА ПРИЦЕЛЕ ЗАХВАТНИЧЕСКОЙ ПОЛИТИКИ СОВЕТСКОГО***

**АЗЕРБАЙДЖАНА. ОТРАЖЕНИЕ ФАЛЬСИФИКАЦИЙ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ИСТОРИЧЕСКОЙ НАУКИ**

*После советизации Азербайджана в 1920г. проблема Нагорного Карабаха перешла в новую фазу. По сути, захватническая политика Азербайджана не изменилась. Представители азербайджанской исторической науки всячески фальсифицируют известные факты, «оправдывают» агрессивную позицию своей страны безосновательными доводами. В частности, притязания Советского Азербайджана по отношению к Нагорному Карабаху объясняют тем ложным тезисом, что якобы Карабах в 1919-1920гг. полностью входил в состав Азербайджана. В данной статье на основе ряда фактов разоблачаются эти ложные гипотезы азербайджанских авторов. Потеря исторических земель Республики Армения произошла в результате общих интересов кемалистских большевиков и Советского Азербайджана, а не по принципу исторической справедливости, что пытаются «доказать» азербайджанские историки.*

***Ключевые слова:*** *Советский Азербайджан, Республика Армения, пленум, факт, захватническая политика, самоопределение, азербайджанский историк, фальсификация, спорные территории, притязания.*

***A.Khachatryan***

**THE CONFLICT OF ARTSAKH IN THE EXPANSIONARY POLICY OF AZERBAIJAN. AN OUTLINE OF AZERI DISTORTIONS OF HISTORY**

*1920 saw sovetization of Azerbaijan and a new period of Artsakh conflict. Azeri expansionary policy was unchanged at its core. Azeri historians continued to distort well-known historical facts, “to justify” the violent stance of their country basing on weak arguments. In particular, they interpreted the pretensions of Soviet Azerbaijan over Nagorno Karabakh basing on the false argument that it was completely integrated into Azerbaijan during 1918-1920. The article reveals the plausibility of these arguments of Azeri historians by evidence. The loss of the territory of the Republic of Armenia was the result of common political interests of Kemalist Turks, Bolsheviks and Soviet Azerbaijan. It was not the result of historical justice, as “proven” by Azeri historians.*

***Key words:*** *Soviet Azerbaijan, the Republic of Armenia, referendum, expansionary policy, self-identification, Azeri historian, distortion, disputable lands, pretensions*

1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանը խորհրդայնացվեց: Ադրբեջանի խորհրդայնացումով վերջ չդրվեցին նրա կառավարության զավթողական հավակնություններին: Խորհրդայնացումը անդրկովկասյան տարածաշրջանում ստեղծեց նոր իրողություններ, փոխադարձ շահերի նոր վերադասավորումներ, որոնց արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կրեց տարածքային նոր կորուստներ: Պատմագիտության միակ չափանիշը պետք է հանդիսանա ճշմարտությունը: Սակայն ադրբեջանական պատմագիտության ներկայացուցիչները, խեղաթյուրելով պատմական փաստերը, փորձում են «հիմնավորել» իրենց երկրի զավթողական քաղաքականությունը հայկական հողերի նկատմամբ: Այսպես, ադրբեջանցի պատմաբան Ջ. Հասանլին իր «Поиск исторической правды» մեծադողրդ վերտառությամբ հոդվածում զարգացնում է հետևյալ անհեթեթ միտքը, թե իբր Ղարաբաղը մուսավաթական կառավարության օրոք ամբողջությամբ մտնում էր Ադրբեջանի կազմի մեջ: Իր ասածը Հասանլին «հիմնավորում էր» Ղարաբաղի հայության հրավիրած յոթերորդ համագումարի ընդունած որոշմամբ: Նման մի միտք է գրում նաև Ի. Ալիևը իր «Нагорний Карабах, факты против лжи» գրքում, նշելով որ Ղարաբաղը մուսավաթության կառավարության ժամանակ ամբողջությամբ մտնում էր Ադրբեջանի կազմ, և իբր տնտեսական կախվածությունը հիմք էր հանդիսացել, որ Ղարաբաղի հայությունը իր կողմից հրավիրված համագումարում աներկբա արտահայտվի Ադրբեջանի կազմ մտնելու օգտին[1]: Այսպես, Հասանլին գրում է. «Ղարաբաղի և Զանգեզուրի Բաքվի հետ մշակութային և տնտեսական կապի անխախտությունը, Բաքվի կողմից այդ նահանգների տասնյակ հազարավոր աշխատատեղերի ապահովումը, իր վառ ապացույցը գտավ 1919թ. հրավիրված Ղարաբաղի հայության համագումարում, որը հայերի համար անտանելի մուսավաթական ռեժիմի և Հայաստանյան գործակալների սադրիչ գործողությունների պայմաններում, այդուհանդերձ վճռական արտահայտվեց Ադրբեջանի հետ մեկ ամբողջություն կազմելու հարցում, հայերի համար հանգիստ կյանք ապահովելու պայմանով»[2]: Նախ ուշադրություն հրավիրենք հեղինակի կողմից կարևորած մեջբերման այն մտքին, որտեղ նշվում էր, որ հայերի համար մուսավաթական ռեժիմն անտանելի էր: Հենց նման ռեժիմի անտանելիության պայմաններում է, որ Ղարաբաղի հայության յոթերորդ համագումարը որոշեց ժամանակավոր ընդունել Ադրբեջանի իշխանությունը: Հասանլին որևէ հիմք, պատմական որևէ շարժառիթ չունի յոթերորդ համագումարի որոշումը ընդունելու

---

[1] Տե՛ս **Алиев И.**, *Нагорный Карабах, история, факты против лжи, стр., 93.*

[2] **Гасанлы Д.**, *Поиск исторической правды, <<Кавказ.Глобализация>>, выпуск 3-4, 2010, стр. 153.*

ելակետային, հենց այն պատճառով, որ նման որոշումն ընդունվեց ֆիզիկական գոյության վտանգի ներքո: Ադրբեջանցի պատմաբանը բացարձակ չի խոսում 1919թ. օգոստոսի 22-ին հրավիրված համագումարի որոշման ժամանակավոր բնույթի մասին: Պատմական անհերքելի իրողությունն այն է, որ արցախահայությունը 1919թ. իր կողմից հրավիրված յոթերորդ համագումարում իսկապես ընդունեց Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու որոշում, սակայն ժամանակավորապես, մինչև Փարիզի վեհաժողովում հարցի վերջնական որոշումը: Նման որոշում ընդունվեց անգլիացիների կողմից երկրամասը լքելու և անմիջականորեն գեներալ-նահանգապետ Խոսրով Բեկ Սուլթանովի հրահրած վերջնագրային սպառնալիքների ներքո: Հակառակ դեպքում Սուլթանովը սպառնում էր հայերին ոչնչացմամբ: Զուտ օր օրի ահագնացող բռնություններին վերջ տալու նպատակով՝ համագումարը ընդունեց հաշտության մասին որոշում և ժամանակորապես ճանաչեց Ադրբեջանի իշխանությունը: Փաստն այն էր, որ դրան նախորդած 6 համագումարներում, երբ մահվան սպառնալիք չկար, և ժողովուրդը հնարավորություն ուներ ազատ արտահայտելու իր կամքը, արցախահայությունը բացառել է Ադրբեջանի իշխանությունը նույնիսկ ժամանակավոր ճանաչելու պահանջը, ասված է Փարիզի խաղաղության վեհաժողովին ուղղված ՀՀ կառավարության ընդունած հուշագրի մեջ, 1919թ. օգոստոսի վերջին[1]: Հուշագրի մեջ ասված էր, որ «կառավարությունը շարունակում է համարել, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասն են, և այդ հստակ համոզմունքը ոչ մի անգամ չպիտի տատանվի օգոստոսի 22-ին Ադրբեջանի Հանրապետության և Ղարաբաղի հայության յոթերորդ համագումարի ընտրած հանձնաժողովի միջև կնքված այսպես կոչված համաձայնագրով, քանզի նման համաձայնագիրը ոչ թե արդյունք էր Ղարաբաղի հայության ազատ կամարտահայտման, այլ ստիպողաբար՝ բնակչության վերջնական ոչնչացման վտանգով պայմանավորված[2]»:

Մի խոսքով, անհիմն են Ադրբեջանի պատմաբանների այն պնդումները, թե Ադրբեջանի մուսավաթական կառավարության օրոք Ղարաբաղը մտել է Ադրբեջանի կազմ: Ուղղակի անհեթեթություն է հիմք ընդունել օգոստոսյան ժամանակավոր համաձայնությունը: Ադրբեջանցի պատմաբան Տ. Կոչառլին մեջբերում է Վ. Էվոյանի (Հայկական ԽՍՀ կենտրոնական արխիվի տնօրեն) խոսքն այն մասին, որ 1918-1920թթ.՝ մինչև Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատումը, Արցախի բնակչությունը կարողացել է լեռնային

---

[1] *Sti՛u Нагорный Карабах в 1918-1923гг., сборник документов и материалов, Ереван, 1992, стр., 99. (далее Нагорный Карабах в 1918-1923гг.)*

[2] *Նույն տեղում, էջ 336:*

երկրամասը պաշտպանել մուսուլմանական զանգվածային հարձակումներից, և մինչև 1920թ. ապրիլը, այսինքն՝ մինչև խորհրդային իշխանության հաստատումը Ադրբեջանում, Արցախը միացվել է Հայաստանին[1]: Կոչառլին Էվոյանի այս տեսակետը համարում է տարօրինակ: Մինչդեռ տարօրինակ է հենց Կոչառլիի տրամաբանությունը հարցի շուրջ: Նույն ոգով էլ Տ. Կոչառլին է գրում, թե «1919թ. օգոստոսից մինչև 1920թ. ապրիլը Լեռնային Ղարաբաղը թե դեֆակտո, թե դեյուրե գտնվել է Ադրբեջանի Հանրապետության կազմում»[2]: Կոչառլին նույնպես Ղարաբաղի՝ Ադրբեջանի կազմում ճանաչելու հիմքը տեսնում է նույն օգոստոսյան ժամանակավոր, ոչինչ չնշանակող համաձայնությունը: Հատկանշական են նշված պատմաբանի կողմից 1918թ. մայիսից մինչև 1919թ. օգոստոս ընկած ժամանակահատվածի վերաբերյալ դատողությունները: Այսպես, նա նշում է, որ ճիշտ է, 1918թ. հունիսին ընդունվել էր որոշում Լեռնային Ղարաբաղի ինքնուրույնության մասին, սակայն այն մնացել էր թղթի վրա, իսկ 1919թ. հունվարից իշխանությունը բոլոր առումներով Լեռնային Ղարաբաղում իրականացնում էր Խոսրով Բեկ Սուլթանովը: Այնուհետև պատմաբանը կատարում է հետևյալ հիմնավորումը. «Հիմնավորումը, որ Արցախի հայ բնակչությունը 1918-1920թթ. կանգնած է Ադրբեջանից քաղաքական անկախության հաստատակամության վրա», մատից քամված էր: Գոնե ադրբեջանցի պատմաբանը մեկ դրվագ փորձում էր չկեղծել, այն, որ 1918թ. Լեռնային Ղարաբաղը ինքնակառավարվող երկրամաս էր: Իսկ ինչ վերաբերում է Խոսրով Բեկ Սուլթանովի կողից Ղարաբաղը ղեկավարելու փաստին, ապա դա անօրինական և արցախահայության վզին ադրբեջանական անընդունելի իշխանությունը փաթաթելու որոշում էր: Դրանով նույնիսկ ադրբեջանցի պատմաբանը խոստովանում է Ադրբեջանի զավթողական կեցվածքը, քանի որ եթե իսկապես Արցախն Ադրբեջանի կազմում լիներ ի սկզբանե, ապա նա չէր նշի երկրամասի 1918թ. մայիսից ձեռք բերած ինքնուրույնության մասին: Իսկ Սուլթանովի իշխանությունը, որ մտցվեց Ղարաբաղում ուժով և արյամբ, երբևիցե չընդունվեց արցախահայության կողմից: Այստեղ հարկ է նշել արցախահայության կողմից հրավիրված 5-րդ համագումարի որոշման մասին, որտեղ ասված էր, որ «Ադրբեջանական գեներալ-նահանգապետության հայերի վրա իշխանության տարածման հարցի հետ կապված, արցախահայության 5-րդ համագումարը անհրաժեշտ է համարում հաղորդել, որ Ադրբեջանը միշտ էլ եղել է Թուրքիայի հանցակիցը և միջնորդը հայերի դեմ գործած գազանությունների հարցում… համագումարը գտնում է, որ քաղաքական, պատմական, մշակութային-

---

[1] *Карабахский вопрос. Истоки и сущность в документах и фактах, Степ., 1988, стр. 100.*

[2] ***Кочарли Т.**, К истории карабайского вопроса, стр., 99.*

իրավական և հատկապես հայության տնտեսական պայմանները, ոչ մի դեպքում, չեն կարող հիմք հանդիսանալ հայ ժողովրդին, նույնիսկ ժամանակավոր, փաթաթելու Ադրբեջանի վարչական իշխանությանը: 5-րդ համագումարը անընդունելի է համարում Ադրբեջանի կողմից վարչական իշխանության որևէ ձևի ընդունում»[1]: Հատկանշական է, որ 5-րդ համագումարը նշում էր, որ իր կողմից նման որոշման ընդունումը արտահայտում էր իր բոլոր ընտրողների անսասան ու հստակ դիրքորոշումը և անգլիական հրամանատարությունը հարկ եղած դեպքում կարող է համոզվել դրանում՝ անցկացնելով համաժողովրդական հանրաքվե: Փաստորեն, Լեռնային Ղարաբաղում գեներալ-նահանգապետի նշանակումը չի ընդունվել արցախահայության կողմից, հետևաբար ադրբեջանցի պատմաբանների այն պնդումները, թե Ղարաբաղը ընդգրկվել է Ադրբեջանի կառավարման ոլորտ, իրականությանը չի համապատասխանում: Բացի դրանից պետք է ելակետային համարել նաև այն փաստը, որ 1918թ. հռչակված Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանները որևէ միջազգային նշանակության փաստաթղթերով որոշված չեն եղել, հետևաբար, պետության զավթողական հավակնություններն ու հրահրած բռնությունները տարածքը իր սահմաններում ներառելու ուղղությամբ, չեն կարող իրական ու արդարացի պահանջատիրության հիմք հանդիսանալ:

Պատահական չէ, որ Ադրբեջանում, խորհրդային իշխանության հաստատումից հետո, այդ իշխանությունը շարունակեց նույն անհիմն պահանջատիրությունը բնիկ հայկական պատմական տարածքների նկատմամբ: 1920թ. ամռանը Հայաստանի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը բավականին լարված էր: Թե՛ Քեմալական Թուրքիան և թե՛ Խորհրդային Ադրբեջանը տարածաշրջանում վարում էին հայկական տարածքները կլանելու ագրեսիվ արտաքին քաղաքականություն: Թիկունքում ունենալով Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության աջակցությունը Ադրբեջանի նոր ձևավորված խորհրդային կառավարությունը Հայաստանի կառավարությանը 1920թ. ապրիլի 30-ին (ընդամենը 2 օր առաջ Ադրբեջանում հաստատվել էր խորհրդային իշխանությունը) վերջնագրի տեսքով նոտա ուղղեց, որտեղ պահանջում էր Ղարաբաղն ու Զանգեզուրը մաքրել հայկական զորքերից: Մայիսի 1-ին 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը ևս վերջնագիր ներկայացրեց Հայաստանի կառավարությանը՝ պահանջելով հայկական զորքերը դուրս բերել Ադրբեջանի տարածքից: «Սույնի չկատարումը կդիտվի որպես հայկական կառավարության մարտահրավեր Ռուսաստանի Սոցիալիստական

[1] *Карабахский вопрос. Истоки и сущность в документах и фактах, стр. 31.*

Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությանը»[1]: Հայաստանի կառավարությունը նույն օրը՝ մայիսի 1-ին, շտապեց պատասխանել 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության վերջնագրին, նշելով, որ Ադրբեջանի տարածքում հայկական զորքեր երբեք չեն եղել և ներկայումս էլ չկան, այլ հակառակը՝ ադրբեջանական զորքերն են, որ հայկական Ղարաբաղում պատերազմում են բնակչության դեմ: Հատկանշական է այն փաստը, որ Հայաստանի կառավարության հղած պատասխան նոտայում կա մի կարևոր առաջարկություն. «Հայկական կառավարությունը խնդրում է Ձեզ /այսինքն ռուսական կողմին Ա.Խ./ Ադրբեջանի նոր կառավարությանը առաջարկել դուրս հանել զորքերը հայկական Լեռնային Ղարաբաղից և հետո արդեն 9-րդ անգամ անցկացնել բնակչության ազատ կամարտահայտություն և վարվել համապատասխան բնակչության կամքի»: Այս պատասխանից հստակ երևում է, որ հայկական կողմը վստահ է, համոզված է, որ հայկական Ղարաբաղը, որ քանիցս անգամ չի ընդունել Ադրբեջանի իշխանությունը, մշտապես աներկբա արտահայտել և կշարունակի արտահայտել իր կողմից ընդդեմ իրեն պարտադրվող Ադրբեջանի զավթողական քաղաքականության:

Այժմ ներկայացնենք արցախյան հիմախնդրի շուրջ ստեղծված իրավիճակը *Խորհրդային Ռուսաստան-Ադրբեջան-Թուրքիա* հարաբերությունների և քաղաքական շահերի նոր համատեքստում: Ակնհայտ էր խորհրդային արտաքին քաղաքականության երկսայր, երկիմաստ քաղաքականությունը հարցի շուրջ: Մի կողմից՝ հագուրդ տալ Խորհրդային Ռուսաստանի գիրկը նետված և կարմիր «հագած» Ադրբեջանի անհիմն տարածքային պահանջներին՝ ադրբեջանա-թուրքական ճամբարը իր կողմում պահելու նկատառումով, մյուս կողմից՝ Հայաստանի խորհրդայնացումը գլուխ բերելու նպատակով որոշակի հանդուրժողական, զիջողական քաղաքականություն վարել: Ադրբեջանի զավթողական պահանջատիրությունը լավ է ըմբռնել Խորհրդային Ռուսաստանի արտգործկոմկոմ Գ. Չիչերինը, որը հաճախ է զգուշացրել նարիմանովյան քաղաքականության կործանարար հետևանքները: Մինչ այդ պետք է նշել նաև, որ 1920թ. ապրիլի 23-28-ը կայացած արցախահայության 9-րդ համագումարը որոշեց չեղյալ հայտարարել 1919թ. օգոստոսի 22-ին կայացած 7-րդ համագումարի որոշումը՝ ժամանակավորապես ընդունելու Ադրբեջանի իշխանությունը՝ նրա ռազմատենչ կեցվածքի պատճառով, ինչպես նաև տարածեց հայտարարություն՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու վերաբերյալ՝ որպես նրա անքակտելի մաս[2]:

---

[1] ***Զոհրաբյան Է.***, *Նախիջևանյան հիմնահարցը/1920-1921/, Եր,, 2010, էջ 12:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 486:*

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 9-րդ համագումարի որոշումից հետո էլ երբևիցե կողմ չի եղել հարցը ռազմական ճանապարհով լուծելու տարբերակին՝ կոչ անելով ադրբեջանական կողմին խաղաղ բանակցությունների, ինչին Ադրբեջանը շարունակում էր պատասխանել սպառնալիքներով և նոր բռնությունների դիմելով: 1920թ. հունիսի սկսվեցին ռուս-հայկական բանակցությունները Մոսկվայում: Հայկական պատվիրակությունը գլխավորում էր Լևոն Շանթը: Բանակցությունների սեղանին վիճելի տարածքների հարցն էր: Ռուսական կողմը հակված էր վիճելի տարածքներում ժամանակավոր հաստատել իր իշխանությունը՝ մինչև հարցի վերջնական լուծումը: Մինչ ընթանում էին ռուս-հայկական բանակցությունները, ակնհայտորեն երևացին մոսկովյան քաղաքականության հակասությունները, ինչպես նաև նարիմանովյան ողջ քաղաքականության զավթողականությունը: Այսպես, ադրբեջանամետ գործիչ Օրջոնոկիձեի հեռագիրը՝ ուղղված Չիչերինին, արտահայտում էր Ադրբեջանի օգտին գործելու, նրան բավարարելու ակնհայտ բովանդակություն: «Ադրբեջանը առանց Ղարաբաղի և Զանգեզուրի ոչ մի կերպ չի կարող մնալ: Ընդհանրապես իմ կարծիքով հարկավոր էր Մոսկվա հրավիրել Ադրբեջանի ներկայացուցչին և նրա հետ միասին լուծել Ադրբեջանին և Հայաստանին վերաբերող բոլոր հարցերը: Դա պետք է անել մինչև Հայաստանի հետ պայմանագրի ստորագրումը…»[1]: Մեկ այլ գրության մեջ՝ ուղղված Լենինին, Ստալինին, Չիչերինին, Օրջոնոկիձեն հավաստիացնում է. «Կարող եմ Ձեզ հավաստիացնել, որ մենք բավականին պարզ պատկերացնում ենք մեր խաղաղության քաղաքականությունը և իրագործում ենք այն, բայց ես վստահ եմ, որ Ադրբեջանում խորհրդային իշխանության ամրապնդման և Բաքուն մեզ պահելու համար անհրաժեշտ է միացնել Լեռնային Ղարաբաղը: Այդ հարցի այլ լուծումը մեր դրությունը Ադրբեջանում դարձնում է խախուտ և ոչինչ չի շահում Հայաստանում…[2]»: Ադրբեջանի զավթողական քաղաքականությունը արտացոլված է Նարիմանովի շուրթերով՝ սպառնալիքների և վերջնագրերի տեսքով: 1920թ. հունիսի 27-ին Լենինը ստանում է Նարիմանովի ընդարձակ հեռագիրը, որտեղ ասված էր. «Թանկագին ընկեր Լենին, ընկ. Չիչերինի հեռագրից երևում է, որ Կենտրոնի տեղեկատվությունը միակողմանի է: Կենտրոնն ընկել է նրանց ազդեցության տակ, ովքեր մինչև այժմ դենիկյանների հետ մեկտեղ գործում են Ադրբեջանի խորհրդային իշխանության դեմ: Եթե Կենտրոնին ցանկալի է ամբողջովին հրաժարվել արևելյան քաղաքականությունից, Ադրբեջանը զոհաբերել և իրեն պահել միայն Բաքուն, նավթը և ամբողջովին հրաժարվել արևելյան

---

[1] ***Զոհրաբյան Է.***, *նշվ. աշխ., էջ 27:*

[2] *Нагорный Карабах в 1918-1923гг., Сборник документов и материалов, Ереван, 1992, стр., 505.*

քաղաքականությունից, թող դա անի, բայց զգուշացնում եմ. Բաքուն չի կարելի պահել առանց ամբողջ Ադրբեջանի՝ դավաճան դաշնակների և վրացական մենշևիկների հարևանությամբ: Այնուհետև Նարիմանովը սպառնում էր, հարցի ոչ հօգուտ Ադրբեջանի լուծման պարագայում, հակահեղափոխությամբ ընդդեմ սոցիալիստական իշխանության: «Հակահեղափոխությունը ճնշված է, բայց նա շնչում է և պատրաստ է նոր ուժով բռնկվել, քանի որ Կենտրոնը մեզ դրել է այնպիսի պայմաններում, որ շուտով ի վիճակի չենք լինի գործել խոսքի ուժով, այլ միայն զենքի ուժով» [1]: Խոսքից երևում է նարիմանովյան տակտիկան՝ սպառնալ հակախորհրդային ուժերի արթնացմամբ, մուսավաթականների պրովոկացիաների նոր աճով… Չիչերինը Լենինի առաջարկով ստիպված էր պատասխանել Նարիմանովի այս հեռագրին և մեկնաբանություն տալ: Չիչերինը շատ լավ է հասկացել Ադրբեջանի նվաճողական քաղաքականությունը, նրա անհագուրդ ագրեսիան հայկական տարածքների նկատմամբ: Լենինին ուղղված բացատրական նամակում Չիչերինը գրում է. «Ադրբեջանից ոչ ոք ոչինչ չի խլում: Ղարաբաղը և այդպես կոչված վիճելի տարածքները ժամանակավորապես գրավվում են ռուսական խորհրդային զորքերով և մենք ժամանակավորապես դրանք չենք տալիս ոչ Հայաստանին, ոչ Ադրբեջանին: Դա չի կողոպտում ոչ մեկին, ոչ մյուսին: Ամեն մի այլ լուծում մեզ կդներ մեկին՝ ի վնաս մյուսի, հովանավորելու կեղծ ուղու վրա: Մեր լուծումը միակ հնարավորն է: Ղարաբաղը վաղեմի հայկական տարածք է, բայց հայերի ջարդերից հետո, հարթավայրերում բնակվեցին թաթարները, իսկ հայերը մնացին լեռներում: Մենք սակայն այդ շրջանը չենք տալիս հայերին, որպեսզի չնեղացնենք թաթարներին, չենք տալիս նաև թաթարներին, ինչը խորապես սխալ քայլ կլինի խաղաղարարների՝ մեր անհրաժեշտ քաղաքականությանը հակասող: Բայց Նարիմանովը ուզում է Բաքվի թաթարների զավթողական հավակնություններին գոհացում տալ: Դա անթույլատրելի է»: Այնուհետև Չիչերինը նշել է. «Մենք ամենօրյա զգալի ջանքեր ենք գործադրել մեր ընկերներին /նկատի ունի Նարմանովի, Օրջոնոկիձեի, Մդիվանիի պլանները հայկական տարածքները ուժով գրավելու տակտիկան/ ետ պահելու հարձակողական գործողություններից ընդդեմ Վրաստանի և Հայաստանի: Այդ կոնֆլիկտի վերջնական թեզը Ադրբեջանի կառավարության հավակնություններն են հայկական տարածքների նկատմամբ, որոնք միշտ պատկանել են Հայաստանին, փաստացի գտնվում են Հայաստանի հանրապետության տիրապետության տակ: Ադրբեջանական կառավարությունը հավակնում է Ղարաբաղին,

[1] ***Զոհրաբյան Է.***, *նշվ. աշխ., էջ 31:*

Զանգեզուրին և Շարուր-Ղարալագյազին՝ Նախիջևանի հետ միասին, Օրդուբադին և Ջուլֆային»[1]:

Պետք է ասել, որ Չիչերինը լավ է հասկացել, որ Ադրբեջանի զավթողական կեցվածքը ոգեշնչելով և թույլ տալով, որ նրա զորքերը առաջխաղացում արձանագրեն, դրանով ինքնաբերաբար կնպաստի թուրանական ծրագրերի իրականացմանը: Հասանլին գրում է, թե Չիչերինը չէր ամաչում Լենինին մոլորության մեջ դնելուց, ով կովկասյան գործերից այդքան էլ լավ չէր հասկանում[2]: Խոսքը վերաբերում էր Չիչերինի նշած ճշմարիտ մտքին. «Ղարաբաղը վաղեմի հայկական տարածք է»: Խեղաթյուրելով ակնհայտ պատմական փաստերը՝ Հասանլին գրում է , որ նախապատրաստվում էր այն, որ ադրբեջանական անվիճելի տարածքները հայտարարվեին վիճելի, ինչը և կատարվեց 1920թ. ռուս-հայկական համաձայնագրով: Խոսքը 1920թ. օգոստոսի 10-ի հայ- ռուսական համաձայնագրի մասին է, որով վիճելի համարվող Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը զբաղեցվել են Խորհրդային Ռուսաստանի զորքերի կողմից[3]: Բ.Լեգրանի (ՌՖՍՀ նեկայացուցիչ) և Լևոն Շանթի պատվիրակության երևանյան բանակցությունների արդյունքում կազմված հայ-ռուսական պայմանագրի նախագիծը դատապարտված էր լինելու անարդյունավետ, քանի որ նրանցում նախանշված պայմաններն անընդունելի էին և՛ Բաքվի, և՛ Անկարայի համար: Հայկական պատմական տարածքները կուլ գնացին ադրբեջանաթուրքական զավթողականությանը, ստի ու կեղծիքի, սպառնալիքի լեզվին: Այդ ողջ կեղծությունը և ագրեսիան դարձնելով պատմագիտության հիմք՝ ադրբեջանցի պատմաբան Մուստաֆ-Զադեն կատարում է ցինիզմի հասնող ենթադրություններ՝ գրելով. «Խորհրդային Ռուսաստանի Ադրբեջանում դիրքերի ուժեղացմանն զուգահեռ, տեղի էր ունեում այն, որ այդ պետությունը վեր էր ածվում յուրօրինակ դոնորի բոլշևիկների ռեգիոնալ քաղաքականության համար և շնորհիվ իր բնական պաշարների ու տարածքի, կոչված էր սիրաշահելու վրացական և հայկական բուրժուական հանրապետություններին, բարենպաստ պայմաններ ստեղծել Հայաստանի խորհրդայնացման համար[4]»: Այսպես Հասանլին մեջբերում է Նարիմանովի խոսքերը.<< Հայաստանը, որը պաշտպանել է Դենիկինին, ստացել է թե ինքնուրույնություն, թե Ադրբեջանի տարածքները, Վրաստանը, որը երկակի քաղաքականություն է վարել, ստացել է ինքնուրույնություն, Ադրբեջանը, որը երեք հանրապետություններից առաջինն է նետվել Խորհրդային

---

[1] *Нагорный Карабах в 1918-1923гг., стр. 516.*

[2] *Տե՛ս* ***Гасанлы Д.****, Ук.соч., стр., 160.*

[3] *Нагорный Карабах в 1918-1923гг., стр. 574.*

[4] ***Мустаф- Заде Р.****, Российско-азербайджанские отношения 1918-1922 гг., стр 574.*

Ռուսաստանի գիրկը, կորցնում է և տարածքներ, և ինքնուրույնություն>>: Ասվածից միանգամայն պարզ է, որ խորհրդային դարձած, կարմիր երանգավորված Ադրբեջանը այդ փաստն օգտագործում էր իր զավթողական հավակնություններին հագուրդ տալու նպատակով: Պատկերավոր ասած՝ պահանջը հետևյալն էր. << Խորհրդայնացել եմ, ուրեմն բավարարեք պահանջներս, նպաստավոր պայմաններ ստեղծեք՝ այլոց պատմական հողերը գրավելու տանտիրոջ իրավունքով>>: Չիչերինը, որը միակն էր խորհրդային գործիչներից, ով լավ էր հասկացել Ադրբեջանի ողջ զավթողական քաղաքականությունը, զերծ չմնած Տ. Կոչառլիի քննադատություններից: Այսպես, վերջինս գրում է., <<Չիչերինը չէր ուզում հաշվի նստել ոչ պատմության, ոչ էլ Օրջոնոկիձեի ու Ադրբեջանի ղեկավարության հետ>>[1]: 1920թ. օգոստոսի 10-ին Երևանում կնքվեց ռուս-հայկական համաձայնագիր, որով ժամանակավոր վիճելի տարածքներն անցնում էին Ռուսաստանի հսկողության ներքո: Այս համաձայնագիրը նոր հակահայկական հիստերիայի տեղիք տվեց Ադրբեջանում և իր արտացոլումն գտավ ադրբեջանական խեղաթյուրված պատմագիտության էջերում: Նույն Հասանլին գրում է, որ ռուս-հայկական համաձայնագրի կնքման նախօրեին Ադրբեջանի արտաքին գործերի ժողկոմը պատրաստել էր փաստաթուղթ, որով պատմաազգագրական, աշխարհագրական և վարչական տվյալների հիման վրա նկարագրված են Հայաստանի և Ադրբեջանի սահմանները[2]: Թե ինչ պատմական փաստերի մասին է խոսքը, ադրբեջանցի հեղինակը լռում է՝ առանց հետամուտ լինելու, թե 1918թ. Ադրբեջանի Հանրապետության սահմանները որևէ միջազգային նշանակության կառույցով սահմանագծված և ճանաչված չէին:

1920թ. սեպտեմբերին սկիզբ առավ թուրք-հայկական պատերազմը, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունն անկում ապրեց: Նույն թվականի դեկտեմբերի 2-ին Հայաստանը խորհրդայնացվեց: Հայկական տարածքների համար պայքարը մտավ նոր փուլ, որը, ցավոք, նույնպես ավարտվեց հայերի համար ոչ ցանկալի արդյունքներով: Խորհրդաքեմալական ձևավորված դաշինքը, ներառելով Խորհրդային Ադրբեջանի՝ որպես Թուրքիայի կրտսեր եղբոր շահերը, Հայաստանի Հանրապետության համար կանխորոշեց նրա պատմական տարածքների, այդ թվում և Լեռնային Ղարաբաղի կորուստը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

---

[1] ***Кочарли Т.***, *նշվ. աշխ., էջ 104:*

[2] *Տե՛ս* ***Гасанлы Д.***, *ук.соч. стр. 166.*